հԱՐԱՍԱՆՑԻՆ

1222 - 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խորանաշատ 800

Տպագրվում է Անատոլի Սաղոյանի ընտանիքի մեկենասությամբ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խորանաշատ

Դարերի դրոշմն ունի Խորանաշատը և միևնույն ժամանակ լավագույնս արտահայտում է մեր ժողովրդի նկարագիրը՝ խոցված, բայց ոչ կործանված, լուռ, Հայրենապահ և հիմնական իմաստով անտեսված:

Սահմանի և մեր լեռնաշխարհի գեղեցկուհին, դարերը գրկած, 800 տարի մատակարարել է Աստծու լույսն ու գիտությունը, սերունդներին կրթել և իր մեջ պարուրել Հայոց հաղթանակած պետականության տեսիլքը, ավերվել է և նորից վերհառնել հակառակ բոլոր հարվածների ու տառապանքների:

Սրբալույս Մխիթար Գոշ վարդապետի աշակերտ Վանական մեծ վարդապետի տեսիլքից է ծնվել Խորանաշատի վանքը՝ որպես հոգևոր գիտության, կրթության, մշակութային սխրանքի, ազգային նկարագրի այն մեծագույն սրբավայրը, որն անհոգնաբեկ կերպով սնել է մեր կյանքը անանցանելի արժեքներով ու ճշմարտությամբ, որտեղից ծնվել են մեր մեծանուն հայրերը՝ Վարդան վարդապետը, Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակներցին, Ստեփանոս Աղթամարցին, Հովսեփ վարդապետը, ականավոր փիլիսոփա Սոսթենեսը, Իսրայել եպիսկոպոսը և ուրիշներ:

Այն, լինելով նաև Գոշավանքի հոգեզավակը, լավագույնս շարունակել է հոգևոր, կրթագիտական, մշակութային այն ավանդույթները, որոնք հիմնադրվել են Գոշավանքում և այդպես շարունակաբար տարածվել ողջ Հայաստան աշխարհում:

Այսօր, Խորանաշատի վանքը, ինչպես մեր մյուս սրբավայրերը, ցուցիչն է, ուղիղ համեմատականը, ինչպես նաև հայելին է մեր կյանքի: Ինչպիսի տեսք և պատկեր ունեն մեր սրբավայրերն արտաքնապես, այդպիսին է մեր ազգի նկարագիրը հոգեպես և ներքնապես: Նրանք խոսուն վկաներն են մեր ամբողջական էության և ինքնաարտահայտության:

Վանական տիեզերալույս և հայոց տառապանքը կրած վարդապետն այսօր հանգչում է Խորանաշատի մերձակայքում՝ աղքատների գերեզմանոց կոչված վայրում: Նա համբերությամբ սպասում է մեր սխրանքին՝ շարունակելու իր առաքելությունը, վերականգնելու մեր Խորանաշատի երբեմնի փառքը և այդպիսով վկայելու Հայոց անբեկանելի հավատարմության մասին Աստծուն, Հայրենիքին և մեր ինքնությանը:

Այս իմաստով ենք նաև մենք Հայոց Անկախության օրը՝ Մայիս 28-ը, հռչակել որպես Խորանաշատի Ուխտի օր, որը մեր պետության սահմանին որպես լուռ վկա ողողանջում է Հայոց հավիտենականության մասին:

Գնահատելով և ողջունելով Խորանաշատի 800-ամյա հոբելյանը նշելու նախաձեռնողներին և հանձնախմբի անդամներին՝ մեր աղոթքն ու հույսն է, որ այն չմնա սոսկ հերթական տոնակատարության կամ վերհուշի առիթ, այլ մեծ քայլ կդառնա վերագնահատելու մեր ինքնությունը, վերականգնելու մեր Տունը, վերարթնացնելու մեր ինքնաճանաչողությունը՝ նույնանալու Վանական մեծ վարդապետի և Խորանաշատի ճշմարտության հետ, որտեղ միայն Հաղթանակներ և սխրանքներ են հյուսված՝ վերածվելով ՄԵԾ ՎԵՐԱԴԱՐՁԻ պատմության:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, Հայր Աստծու սերը և Սուրբ Հոգու հաղորդությունը առաջնորդեն մեզ բոլորիս:

Սիրով և աղոթքով՝ Բագրատ եպիսկոպոս Գալստանյան
Առաջնորդ Տավուշի թեմի

ԽՈՐԱՆԱՇԱՏԸ՝ ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՉԱԿԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆ

Այս տարի լրանում է պատմական Ուտիք նահանգի Տավուշ գավառում գտնվող Խորանաշատի վանական համալիրի 800-ամյակը: Դա մեր բազմադարյա պատմությունն ու մշակույթը խորհրդանշող կարևորագույն իրադարձություն է, հոգևոր, կրթական արժեքներով ինքնաճանաչման ևս մեկ առիթ:

Այս կոթողի վայրը մեկտեղում է կրթական-մշակութային մի շարք արժեքներ: Նախ և առաջ, միջնադարյան Հայաստանի նշանավոր այս հուշարձանախումբը հայ ճարտարապետական արվեստի լավագույն նմուշներից է, որը եղել է նաև ուսումնագիտական և մշակութային հռչակավոր կենտրոն: Խորանաշատի դպրատանը գրչագրվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Նրա վարդապետարանում ուսանելով՝ վարդապետական գավազան են ստացել 13-րդ դարի այնպիսի նշանավոր հայ պատմիչներ, գիտամշակութային ու եկեղեցական գործիչներ, ինչպիսիք են՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան վարդապետը ու Գրիգոր Ակներցին, Առաքել, Հովսեփ ու Իսրայել եպիսկոպոսները, Թորոս, Մարկոս, Սոսթենես, Պողոս, Գրիգոր վարդապետները և այլք: Գնահատելով, արժևորելով ու հանրահռչակելով այս ամենը՝ վերահաստատում ենք մեր հարուստ մշակութային անցյալը, ամրապնդում մեր տեղն ու դերը և համաշխարհային մտքի զարգացման պատմական հոլովույթում:

Ցավոք, այսօր միջնադարյան հռչակավոր համալիրը վտանգված է, և մեր առաջնային խնդիրներից է պահպանել այն՝ նախ որպես կառույց, և ապա իրազեկել լայն հանրությանը՝ դրա պատմական նշանակության, մտքի և հոգևոր արժեքների կերտման յուրօրինակ դպրոցի երբեմնի դերի մասին: Այս գրքույկը վանական համալիրի պատմությունն արձանագրող ուշագրավ ուսումնասիրություն է՝ մի քայլ, որը՝ որպես փրկօղակ, նետվում է նաև աշխարհագրորեն անբարենպաստ դիրքում գտնվող մեր այս հրաշակերտ կոթողի պատմությունն այլակերպ մեկնաբանություններից պաշտպանելու համար:

Առանձնապես պետք է նշել, որ հայ մշակույթը՝ իր բոլոր դրսևորումներով և առանց ժամանակաշրջանային խտրականության, մշտապես պետության ուշադրության կենտրոնում է և հոգածության ներքո: Մենք բարձր ենք գնահատում մեր արժեքների պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված ցանկացած քայլ՝ հանդես գալով որպես վստահելի աջակից ու գործընկեր:

Նախաձեռնող խմբին մաղթում եմ համատեղ արդյունավետ աշխատանք, պետականամետ և հայրենասիրությամբ լեցուն ամուր կամք ու գիտակցում:

Վահրամ Դումանյան
ՀՀ ԿԳՄՍ նախարար

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՅԱՆՔԸ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Վանական վարդապետ Տավուշեցին (1181-1251) միջնադարյան հայոց գիտամշակութային, հոգևոր ու հասարակական կյանքի խոշորագույն դեմքերից է, նշանավոր գիտնական-վարդապետ, ուսուցչապետ ու աստվածաբան: Ծնվել է 1181 թ. Տավուշ գավառի, ամենայն հավանականությամբ, Տավուշ գյուղում: Այժմ այն ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի կենտրոն՝ նույնանուն քաղաքն է:

Վանական վարդապետի սոցիալական ծագումը հայտնի չէ: Սակայն անվիճելի է, որ ծնվել է ուսման հարգն իմացող բազմանդամ ընտանիքում:

Իր ինքնագիր հիշատակարանում, աշակերտների երկերում, Խորանաշատի վանքի վիմագրերում և այնտեղ գրչագրված ձեռագրերի հիշատակարաններում ու «Հայսմավուրք» ժողովածուներում, նա հիշատակվում է Վանական անվամբ: Սակայն հետագա շրջանի հայ մատենագրության մեջ համառորեն կոչվել է Հովհաննես: Առաջինը նրան Հովհաննես է անվանել XVII դ. պատմիչ Առաքել Դավրիժեցին: Ի վերջո, Վանականի բուն անունը սխալմամբ վերածվել է մականվան և ստուգաբանվել որպես վանահայր: Պատճառը Վանական վարդապետին Հովհաննես վարդապետ Տավուշեցու հետ շփոթելն է: Դրա հիմքում ընկած է նրանց վարդապետ ու տավուշեցի լինելը և Մխիթար Գոշի հետ ունեցած կապը: Վերջինս Հովհաննես վարդապետ Տավուշեցու աշակերտն էր և Վանական վարդապետ Տավուշեցու ուսուցիչը:

Խորանաշատի հրուսիսային ճակատը

Ապագա նշանավոր ուսուցչապետը նախնական կրթությունը ստացել է Նոր Գետիկի վանքում՝ աշակերտելով իր եղբայր Պողոսին: 20-ամյա հասակում օծվել է քահանա: Ապա ուսումնառությունն անմիջապես շարունակել Նոր Գետիկի հայտնի վարդապետարանում՝ աշակերտելով նրա հիմնադիր, հռչակավոր գիտնական-վարդապետ Մխիթար Գոշին: Ուշիմ ու խելացի Վանականն, աչքի ընկնելով նաև աշխատասիրությամբ, դարձել է Մխիթար Գոշի սիրելին և նրա երկու ականավոր աշակերտներից մեկը:

Պատահական չէ, որ դեռ ուսումնառության ժամանակ Մխիթար Գոշը նրան ականատես ու ականջալուր է դարձրել 1205/1206 թ. Անիում կայացած եկեղեցական ժողովին, որը հրավիրել էր վրացական պետության սպարապետ ու հազարապետ Զաքարե Բ Զաքարյանը: Այդ ժողովում քննվել են Հայ Առաքելական եկեղեցու ծեսերին վերաբերող որոշ հարցեր:

Նոր Գետիկում ուսումնառությունն ավարտելուց ու Մխիթար Գոշից վարդապետական գավազան ստանալուց հետո ոչ ուշ, քան 1208 թ.՝ «կատարյալ գիտնական» դարձած Վանական վարդապետը վերադարձել է հայրենի Տավուշ գավառ: Այն 1203 թ. իշխան Բլուզ Զաքարե Վահրամյանի կողմից ազատագրվել էր սելջուկյան տիրապետությունից և գտնվում էր

Վահրամյանների հզոր իշխանության կազմում:

Վանական վարդապետը նպատակ ուներ այնտեղ վանք կառուցել և նրան կից վարդապետարան հիմնել՝ գիտամշակութային, մանկավարժական, հոգևոր ու հասարակական գործունեություն ծավալելու համար:

«Երգեվանից բերդի դիմաց, Գարդմանի թիկունքին»՝ ՀՀ Տավուշի մարզի Չինարի գյուղից մոտ 2.5 կմ արևելք ընկած մի տափարակում գտնվող Խորանաշատի ճարտարապետական համալիրի ժամանակագրորեն առաջին և գլխավոր շինություն Սուրբ Աստվածածին եկեղեցին Վանական վարդապետը հիմնել է, ամենայն հավանականությամբ, 1209 թ.: Եկեղեցու շինարարությունն ավարտվել է 1222 թ.: Թեև օծման թվականը հայտնի չէ, սակայն փաստ է, որ այն 1223 թ. գործել է:

Նախքան այդ՝ 1222-ին, Վանական վարդապետը սկսել էր Խորանաշատի վանքի գավթի կառուցումը: Դրանով նա, որոշ հարկադրական ընդմիջմամբ, զբաղվեց մինչև իր փոթորկալից ու բեղուն կյանքի վերջը՝ հընթացս Խորանաշատին կից հիմնելով վարդապետարան

Վանական վարդապետը Խորանաշատը կառուցել է նվիրատուների աջակցությամբ: Վանքի շինության ժամանակ Վանական վարդապետն անվիճելիորեն օգտվել էր իր ուսուցիչ Մխիթար Գոշի հիմնադրած Նոր Գետիկի վանական համալիրի կառուցման փորձից: Անկասկած, նա ևս սկզբում Խորանաշատն ընդգրկող տափարակը կառուցապատել է փայտակերտ եկեղեցով ու տարբեր նշանակության աշխարհիկ շինություններով: Խորանաշատի շրջակա անտառներն այդ հնարավորությունը տալիս էին:

Մոնղոլները, 1220-1222 թթ. երկու անգամ ներխուժելով Վահրամյանների իշխանություն, Խորանաշատը չավերեցին: Դա Վանական վարդապետին հնարավորություն տվեց շարունակելու իր անդուլ շինարարական ու բեղուն գիտամանկավարժական գործունեությունը: Նա միաժամանակ վարում էր Խորանաշատի վանահայրությունը:

Սակայն այն, ինչ չարեցին մոնղոլները, արեցին Խորեզմյան պետության զորքերը: Նրա վերջին տիրակալ Ջալալ ադ-Դինի (1220-1231) զորքերը 1229 թ. գարուն-ամռանն ավերիչ արշավանք կատարեցին Վահրամյանների իշխանության դեմ: Այդ ընթացքում Խորանաշատն ավերվեց: Բարեբախտաբար, Վանական վարդապետին հաջողվեց իր սաների հետ ապաստանել մի շատ բարձր ժայռի գագաթին: Այն գտնվում էր Լորուտ գյուղի դիմաց՝ Տավուշ բերդի հարավային կողմում: Վանականն այնտեղ իր ձեռքով քարայր է փորում և փոքրիկ եկեղեցի կառուցում: Այդ քարայրում նա հավաքում է բազմաթիվ գրքեր ու շարունակում վարդապետարանի գործունեությունը: Երբ Վանականի սաները շատանում են, նա հարկադրված քարայրից իջնում է և, ժայռի ստորոտում եկեղեցի ու սենյակներ կառուցելով, շարունակում գիտամանկավարժական գործունեությունը: Թե ինչու նա 1231 թ. Ջալալ ադ-Դինի անփառունակ անկումից հետո, երբ երկրում խաղաղ պայմաններ էին ստեղծվել, Խորանաշատ չվերադարձավ, պարզ չէ:

Վանական վարդապետին վիճակված էր Տավուշ բերդի մերձակայքում ընդամենը յոթ տարի խաղաղ պայմաններում արարել: Սկսվեցին մոնղոլական նվաճումները: Տավուշ գավառի գրավման ժամանակ Վանական վարդապետի քարայրը լցվեց այնտեղ ապաստանած տղամարդկանցով, կանանցով ու երեխաներով: Քարայրը 1236 թ. ամռանը՝ Վարդավառի տոնին, այսինքն հուլիսի 6-ին, պաշարվեց: Երեք օր անց այնտեղ ապաստանած երեխաները սաստիկ շոգի պատճառով, ծարավից պապակվելով, հայտնվում են մերձիմահ վիճակում: Անսալով քարայրում գտնվողների խնդրանքին՝ Վանական վարդապետն իր աշակերտներ Մարկոս ու Սոսթենես քահանաների ուղեկցությամբ, կյանքը, վտանգելով, գնում է մոնղոլ զորավոր Մոլար Նոյինի մոտ՝ փրկելու իրեն ապավինած ժողովրդին:

Մոնղոլ զորահրամանատարը Վանական վարդապետին հարցնում է, թե նա, իր լսածով, իմաստուն ու երևելի մարդ լինելով ինչու չի հենց սկզբից սիրով ու խաղաղությամբ իրենց ընդառաջ եկել: Ի պատասխան, Վանական վարդապետն ասում է, որ իրենք հապաղել են, մոնղոլների բարեմտության մասին չգիտենալու, երկյուղելու, մոնղոլերեն չիմանալու և նրանցից ոչ մեկի կողմից իրենց մոտ չկանչվելու պատճառով: Այնուհետև հավելում է, որ ինքն ու իր սաները ո՛չ զինվոր են, ո՛չ հարստության տեր, այլ տարբեր տեղերից այդտեղ են հավաքվել ուսումնառության նպատակով: Ապա նա Մոլար Նոյինին ասում է. «ահա ձեր առաջն եք, ինչ կամենում եք, արեք մեզ հետ՝ կամ կյանքով, կամ մահով»:

Վանական վարդապետին լսելուց հետո, Մոլար Նոյինը նրան հորդորում է չվախենալ, հրամայում է նստել ու, կարծելով թե աշխարհիկ իշխան է, Վահրամ Գագեցու ու դեռևս չգրավված բերդերի մասին բազմաթիվ հարցեր է տալիս:



Ս. Կիրակի և Ս. Աստվածածին եկեղեցիներդ արևելյան կողմից

Իր հարցերի պատասխանները ստանալուց հետո նա Վանական վարդապետին հրամայում է, որ քարայրում ապաստանածներին աներկյուղ իջեցնի այնտեղից: Մոլար Նոյինը խոստանում է նրանց ոչ միայն չվնասել, այլև ի սեր նրա՝ վերականգնել իրենց ավերած գյուղերն ու ագարակները:

Երբ քարայրում ապաստանածներն իջնում են, մոնղոլները աշխարհականներին ազատ են արձակում: Սակայն նրանք գերում են Վանական վարդապետի աշակերտներին, այդ թվում նրա եղբորորդի Պողոսին և Կիրակոս Գանձակեցուն: Հուսալով եղբորորդուն ու մյուս սաներին փրկել, Վանականը կամավոր միանում է նրանց՝ հայտնվելով գերու կարգավիճակում: Ի վերջո, 1236 թ. աշնանը Վանական վարդապետի աշակերտներին, բացի երկու քահանաներից, որոնք փախչելիս բռնվում և սպանվում են, մյուսներին հաջողվում է փրկվել: Այդ ընթացքում նա շարունակ հուսադրում էր իր աշակերտներին և մոնղոլներին ապարդյուն աղերսում ազատել նրանց:

Ինչ վերաբերում է Վանական վարդապետին, ապա նա մոնղոլներին առաջարկում է իրեն տանել Գագ բերդ՝ փրկագնվելու: Վերջիններս այդպես էլ վարվում են և, գազեցիները նրան ութսուն դահեկանով փրկագնում են: Այդ իրողությունը Վանական վարդապետի նկատմամբ ժողովրդի տածած մեծ սիրո ու հոչակի վառ վկայությունն է:

Անխոնջ ուսուցչապետը, դրանից անմիջապես հետո, գնում է Խորանաշատ, այն նորոգում ու կառուցապատում՝ համեմատաբար խաղաղ պայմաններում շարունակելով իր բազմակողմանի գործունեությունը: Նա հատկապես «վարդապետական խոսքն էր սովորեցնում նրանց», որ ամեն գավառներից հավաքված էին նրա մոտ: Վանական վարդապետը մինչև կյանքի վերջը Խորանաշատը լքում է երկու անգամ: 1238 թ. նա գնում է Տփխիս և վերադարձնում 1236 թ. գերեվարության ժամանակ մոնղոլների խլած երկու արծաթակազմ ավետարաններից մեկը: Այն վաճառքի հանած նվաճողներից մեծ գումարով գնել էին տեղի հայերը: Երկրորդ անգամ նա Խորանաշատը թողնում է 1240 թ.՝ Վարդավառի տոնին, Ներքին Խաչենի իշխան Հասան-Ջալալի հրավերով Գանձասարի վանքի Սուրբ Հովհաննես եկեղեցու օծմանը մասնակցելու նպատակով: Դրանով իսկ Վանական վարդապետը մեծ շուք է հաղորդում այդ հանդիսավոր արարողությանը: Ինչ վերաբերում է նրա՝ Երուսաղեմ և Հռոմ այցելելու մասին հայտնված կարծիքներին, ապա դրանք իրականությանը չեն համապատասխանում:

Իբրև Խորանաշատի վանահայր՝ 1244 թ. հիշատակվում է Վանական վարդապետի եղբորորդի Պողոս վարդապետը: Ըստ երևույթին, նկատի ունենալով առաջացած տարիքն ու Խորանաշատի կառուցապատման ավարտին մոտ լինելը, Վանական վարդապետը թողել էր վանահայրության պաշտոնը՝ նպատակ ունենալով կենտրոնանալ գիտամանկավարժական ու հասարակական գործունեության վրա:

Ժամանակի աշխարհիկ ու հոգևոր որոշ նշանավոր գործիչների հետ Վանական վարդապետը ծանոթություն ու գործնական սերտ կապեր ուներ: Նրա աշակերտ Իսրայել եպիսկոպոսի կողմից «Հայսմավուրք»-ի խմբագրումը և իր «Հարցմունք և Պատասխանիք»-ի շարադրումն այդ ծանոթության ու գործնական կապերի արդյունք էին: Վանականը «Հայսմա-



Հիշատակարան, ՄՄ ձեռ. 4823, Ալեւտարան, 1238 թ., Տփխիս, գրիչ՝ Վանական վարդապետ,155ա

Խորանաշատի գավիթը

վուրք»-ի խմբագրումն Իսրայել եպիսկոպոսին հանձնարարել էր Հասան-Ջալալի խնդրանքով, իսկ «Հարցմունք և պատասխանիք»-ը գրել էր վերջինիս ու Վահրամ Գագեցու առաջարկով: Վանական վարդապետը սերտ անձնական ու գործնական կապեր ուներ նաև Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու (1221-1267) և Հայ Աղվանից կաթողիկոս Ներսես Բ-ի (1235-1262) հետ: Դրա վկայություններից է 1246 թ. Խորանաշատի վանքին նրանց միաբանելը:

Վանական վարդապետը ստորագրել է այդ թվականին իր աշակերտ Վարդան վարդապետի միջոցով Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր գործիչներին Կոստանդին Ա Բարձրբերդցու ուղարկած «Շրջաբերական թղթի» տակ: 1250 թ. «ստահակներին ուղղող և անզգամներին խրատող, հերձվածողներին հանդիմանող և մեղավորներին դարձի բերող» Վանական վարդապետը Դավիթ Ծարեցու գլխավորած աղանդավորական շարժման մասնակիցներին ոչ միայն բանադրանքի է ենթարկում, այլև «խիստ կշտամբանքի ու մեղադրանքի գիր» գրում՝ ապացուցելով Հայ Առաքելական եկեղեցու դավանությանն անհարիր այդ հերձվածության գաղափարական սնանկությունը: Դրանից մեկ տարի անց՝ տառացիորեն մահվան նախօրյակին, իր աշակերտների՝ մասնավորապես Կիրակոս Գանձակեցու, Վարդան վարդապետի ու Հովսեփ եպիսկոպոսի հետ հմուտ ձևակերպած միջսահման պատասխան է տալիս Հռոմի Ինոկենտիոս IV պապի (1243-1254) թղթին:

Վանական վարդապետը եղել է միջահասակ, մեծերես, փոքրաքիթ, լայնամորուս, փառահեղ ու բարի տեսքով, խաղաղ կեցվածքով անձնավորություն: 1251 թ. Մեծ պահքի օրերին նա հիվանդացավ և շատ չանցած, նույն թվականի մարտի 18-ին, յոթանասունամյա հասակում Խորանաշատում կնքեց իր մահկանացուն: Համածայն իր ցանկության՝ նրա մարմինը հողին հանձնվեց Խորանաշատի արևելյան կողմում գտնվող Սուրբ Ճգնավոր եկեղեցու մոտ՝ աղքատների գերեզմանոցում: Հուղարկավորությանը մեծաթիվ բազմության հետ մասնակցում էին գավառի Սարգիս եպիսկոպոսը և շատ վարդապետներ ու քահանաներ: Հաջորդ օրը Վանականի գերեզմանին այցելելու և հիշատակը հարգելու նպատակով Խորանաշտ եկան Ներսես Բ կաթողիկոսն ու Վահրամյանների իշխանության հոգևոր առաջնորդ Հովհաննես Տուեցի արքեպիսկոպոսը: Ամենայն հավանականությամբ, Սուրբ Ճգնավորից մի քանի մետր դեպի հարավ գտնվող 3 մետր երկարությամբ և պատվանդան ունեցող մոնումենտալ խաչքարը կանգնեցվել է նրա գերեզմանի վրա:

Արտաշես Ծահնազարյան

Վանական վարդապետի գերեզմանի խաչքարը

Ս. Ճգնավոր եկեղեցու ավերակները (XII-XIII դդ.)

Տավուշ բերդ

Խորան, ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ., Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 6ա

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ

Խորանաշատի վարդապետարանը միջնադարյան Հայաստանի առավել հռչակավոր ու արգասաբեր բարձրագույն կրթական օջախներից էր: Այն Նոր Գետիկի վարդապետարանի ժառանգորդն էր: Հիմնվել է նախքան 1210-ական թվականների երկրորդ կեսը՝ մեծ ուսուցչապետ Վանական վարդապետ Տավուշեցու կողմից: Դա հավանաբար կատարվել է Խորանաշտի վանական համալիրի գլխավոր և ժամանակագրորեն առաջին կառույց Սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարությունը հունի մեջ դնելուց և վարդապետարանի անխափան գործունեությունն ապահովող պայմաններ ստեղծելուց հետո:

Նմանատիպ կրթօջախներում ուսումնառությունը տևում էր յոթ-ութ տարի: Դրանից հետևում է, որ Խորանաշատի վարդապետարանն իր առաջին շրջանավարտները տվել է 1220-ական թվականների սկզբին: Այն, անկասկած, նախ գործել է փայտակերտ շինությունում, իսկ հետագայում՝ վստահաբար վանքի գավթում: Վանական վարդապետը մինչև կյանքի վերջը, դժվարին փորձություններ հաղթահարելով, ղեկավարել է վարդապետարանի գործունեությունը:

Առաջին շրջանավարտները տալուց հետո այդ ուսումնական կենտրոնի հռչակը և Վանական վարդապետի իմաստության համբավը լայնորեն տարածվեցին ամբողջ Հայաստանով մեկ: Ուսումնառության նպատակով նրա մոտ էին գալիս երկրի բոլոր կողմերից:

Մարկոս ավետարանիչ, ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ., Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 98բ

Սակայն Խորեմշահ Ջալալ ադ-Դինի զորքերի կողմից 1229 թ. գարուն-ամռանը Խորանաշատն ավերվելուց հետո Վանական վարդապետը ստիպված էր իր աշակերտների հետ ապաստանել Ցավուշ բերդի հարավային կողմում գտնվող մի շատ բարձր ժայռի գագաթին: Նա այնտեղ իր ձեռքով քարայր է փորում, եկեղեցի կառուցում, հավաքում բազմաթիվ գրքեր ու շարունակում վարդապետարանի գործունեությունը:

Այստեղ ևս շատերը գալիս էին նրա մոտ ուսանելու: Եվ երբ քարայրն այլևս չի տեղավորում եկողներին, Վանական վարդապետն իր սաներն հետ թողնում է այն: Ժայռի ստորոտում նա եկեղեցի ու սենյակներ է կառուցում և վարդապետարանի գործունեությունը տեղափոխում այնտեղ:

Մոնղոլների կողմից իր սաների հետ 1236 թ. գերվելուց և սաները փախուստով, իսկ ինքը փրկագնով, նույն թվականի աշնանը գերությունից ազատվելով, Խորանաշատից յոթ տարի բացակայելուց հետո նա վերադառնում է այնտեղ՝ շարունակելով վարդապետարանի գործունեությունը:

Խորանաշտի վարդապետարանի ուսումնական ծրագրի և ներքին կյանքի մասին մեզ հասած սուղ տեղեկություններից մասնավորապես հետևում է, որ այնտեղ ուսուցումն անվճար էր: Այդ հաստատությունը, անկասկած, սկզբում գործում էր նվիրատուների տրամադրած միջոցների, իսկ հետագայում նաև Խորանաշտի կալվածքներից ստացած հասույթների հաշվին: Այնտեղ ուսանելու համար անհրաժեշտ են եղել սկզբնական համապատասխան գիտելիքներ: Նրա սաները սկզբում կրթվել են նախնական, ապա բարձրագույն ուսումնական ծրագրով: Այդ հաստատության ուսումնական ծրագրի նախնական փուլի համառոտ ամփոփումն է Վանական վարդապետի պահպանված գործերից ամենաարժեքավորը՝ «Հարցմունք և պատասխանիք»-ը: Ցավոք, այն առ այսօր կարոտ է գիտական պատշաճ քննության և հրատարակության: Այս աշխատությունը տեղեկություններ է տալիս գիտության այն ճյուղերի մասին, որոնք նախնական փուլում պարտավոր էին յուրացնել վարդապետարանի սաները: Ուսումնառության հաջորդ՝ բարձրագույն փուլի ծրագրով դասավանդվում էին աստվածաբանություն, պատմություն, տոմարագիտություն, մատենագրություն, փիլիսոփայություն, երաժշտագիտություն, աստղաբաշխություն և այլն:

Այսպիսով, Վանական վարդապետը, որը «վարդապետական խոսքով այդ ժամանակ գոյություն ունեցողներից բոլորին գերազանցում էր», Խորանաշատի վարդապետարանի համար կազմել էր ժամանակի ոգուց բխող ուսումնական ծրագիր: Այն արտացոլում էր իր օրերի հայ իրականությունում մշակույթի ու գրականության աշխարհիկացման միտումը: Պատահական չէ, որ նրա՝ մեզ հասած աշխատությունների մեծ մասը շարադրված է ժողովրդին մատչելի, գրեթե խոսակցական միջին հայերենով:

Խորանաշատի վարդապետարանի լրիվ դասընթացը հաջողությամբ յուրացրած շրջանավարտները ստանում էին վարդապետական աստիճան: Ուսումնառությունն ավարտելուց հետո «գիտությամբ լուսավորված՝ նրանցից յուրաքանչյուրը գնում էր իր տեղը և իրենց աշխարհների լույսը դառնում»:

Ինչպես հայտնի է, հայկական միջնադարյան բարձրագույն ուսումնական հաստատություն-

Կազմ կաշեպատ՝ կոստղագրդ և արծաթյա խաչով, ՄՄ ձեռ. 4823, Այվազովսկի, 1517 թ.

Խորանաշատի հարավային նավատը

ների մասնագիտական ուղղվածությունն, իբրև կանոն, պայմանավորված էր նրա հիմնադիր ուսուցչապետի գիտական հիմնական նախասիրությամբ: Այդ առումով, Խորանաշատի վարդապետարանը բացառություն չէր: Այն ուներ պատմագիտական թեքում, որի հիմքում ընկած էր Վանական վարդապետի կողմից հիմնականում գիտության այդ ճյուղը նախընտրելը:

Ասվածի լույսի ներքո բնավ պատահական չէ, որ XIII դ. երեք նշանավոր պատմիչներ՝ Կիրակոս Գանձակեցին, Վարդան վարդապետն ու Գրիգոր Ակներցին ուսանել են Խորանաշատի վարդապետարանում և Վանական վարդապետի սաներն են: Ինչ վերաբերում է Մխիթար Այրիվանեցուն, ապա նա, եթե Վանական վարդապետի սան էլ չէ, անկասկած առնչվել է նրա դպրոցի հետ:

Վարդապետարանի որոշ ուսանողներ, դեռ կրթվելիս, անհրաժեշտ գիտելիքներ ստանալով, զբաղվում էին գիտական գործունեությամբ: Օրինակ, Վարդան վարդապետն այդ ընթացքում հեղինակել է մանր երկեր, ինչպես նաև կատարել թարգմանություններ:

Խորանաշատի վարդապետարանի սաներ են նաև նշանավոր եկեղեցական գործիչ Առաքելը, Արտազ գավառի թեմական, դավանաբանական հարցերում մեծ հեղինակություն ունեցող և Սուրբ Թադեի վանքը նորոգող Հովսեփ եպիսկոպոսը, Սելիտենեի (Մալաթիա) սահմաններում գործող Թորոս վարդապետը, Արցախ-Խաչենի մշակութային ու քաղաքական կյանքում զգալի դեր խաղացած Մարկոս վարդապետը, ժամանակակիցների կողմից իր փիլիսոփայական գիտելիքներով Վահրամ Ռաբունու հետ համեմատվող Սոսթենես վարդապետը, «Հայսմավուրք» ժողովածուներից մեկի խմբագիր Իսրայել եպիսկոպոսը, Ստեփանոս Աղթամարցին, նրա եղբորորդի Պողոս վարդապետը և ազգական Գրիգորիս վարդապետը: Նրանք «գիտությամբ փայլում էին որպես աստղեր» և «արևելքի աշխարհը խաչաձև բաժանելով, լուսավորեցին Սուրբ հոգու կենարար վարդապետությամբ»:

Անշուշտ, Խորանաշատի վարդապետարանի սաների թիվը միայն վերոհիշյալներով չի սահմանափակվում: Ինքնին հասկանալի է, որ մեծ մասամբ մեզ են հասել նրանցից առավել նշանավորների անունները: Ընդ որում, Վանական վարդապետի ամենակարկառուն աշակերտներն են Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետը: Նրանք, հատկապես առաջինը, իրենց աշխատություններում Վանական վարդապետին փառաբանող խոսքեր չեն խնայում:

Իրենց ուսուցչի հետ Խորանաշատի վարդապետարանի սաների անձնական ու գործնական կապերը միայն ուսումնառության տարիներով չէին սահմանափակվում: Նրանցից ոմանք իրենց որոշ երկասիրությունների ստեղծմանը ձեռնամուխ են եղել կամ Վանական վարդապետի հորդորով, կամ էլ ձգտել են հավատարիմ մնալ նրա աշխատությունների ոգուն: Օրինակ, Իսրայել եպիսկոպոսը «Հայսմավուրք»-ը խմբագրել է Վանական վարդապետի հանձնարարությամբ: Վարդան վարդապետն իր «Ժղլանք»-ը երկասիրելիս նախօրինակ է դիտել և սկզբնաղբյուր դարձրել իր ուսուցչի «Հարցմունք և պատասխանիք»-ը: Անկասկած, Կիրակոս Արևելցին (Գանձակեցին) «Հայսմավուրք»-ի իր խմբագրությունը, իսկ Վարդան վարդապետը «Տօնապատճառ»-ի վերախմբագրումն ու վերակազմումն իրագործել են Վանական վարդապետի ցուցումով:

Կիրակոս Գանձակեցին ու Վարդան վարդապետն իրենց պատմությունները շարադրելիս մեծապես օգտվել են Վանական վարդապետի մեզ չհասած «Պատմություն»-ից:

Խորանաշատի վարդապետարանի սաներն այդպիսով, օրինակ ունենալով իրենց «առատամիտ» ուսուցչին, ոչ թե միայն իրական կյանքից կտրված գիտամշակութային գործիչներ էին, այլև հասարակական: Նրանք միաժամանակ իրենց մայր ժողովրդի կյանքով ապրող ու նրա ճակատագրով մտահոգ գործուն մտավորականներ էին: Առանց վերապահության պնդելի է, որ Խորանաշատի վարդապետարանը շրջանավարտների որակական հատկանիշներով ժամանակի հայկական բարձրագույն տիպի կրթօջախների մեջ լավագույններից էր:

Վանական վարդապետի մահվանից հետո Խորանաշատի վարդապետարանի ուսուցչապետությունը 1251 թ. ստանձնեց նրա ազգական Գրիգորիս վարդապետը: Սակայն նրա օրոք այդ հռչակավոր բարձրագույն ուսումնական կենտրոնի փառքը սկսեց աստիճանաբար մարել: Դա պայմանավորված էր ոչ միայն մոնղոլական տիրապետության աստիճանական ծանրացմամբ, որի հետևանքով վարդապետարանի բնականոն գործունեությանը նպաստող



Լուսանցազարդ և գրչության նմուշ, ՄՄ ձեռ. 5601, Ավետարան, 1503 թ., Խորանաշատ, գրիչ՝ Հունան եպս., ծաղկող՝ Ստեփանոս եպս., 13ա

պայմանները վատացել էին: Նոր ուսուցչապետը, ցավոք, զուրկ էր իր նախորդի հեղինակությունից և գիտամանկավարժական ու կազմակերպչական ունակություններից: Փոխարենն աճեցին ու ճանաչում ստացան այն ուսումնագիտական կենտրոնները, որոնցում, այս կամ այն կարգավիճակով, գործում էին Վանականի սաները կամ վերջիններիս աշակերտները:

Միջնադարում մեր ժողովրդի գիտամշակութային ու հոգևոր կյանքում դժվար գերագնահատելի դեր խաղացած այս բարձրագույն կրթական հաստատության գործունեության ավարտի գոնե մոտավոր թվականը հայտնի չէ: Այդուհանդերձ, վստահաբար պնդելի է, որ Գրիգորիս վարդապետը նրա վերջին ուսուցչապետն էր: Ինչ վերաբերում է Խորանաշատի վանքին, ապա իբրև հոգևոր ու մշակութային հաստատություն, այն շարունակում էր գոյատևել:

Արտաշես Ծահնազարյան

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Խորանաշատի գրչության կենտրոնի գործունեությունը ծավալվել է վանական համալիրի հիմնադրումից անմիջապես հետո: Ընդ որում, ձեռագրեր ընդօրինակելու արվեստը Խորանաշատի վարդապետարանում դասավանդվող հիմնական առարկաներից էր: Վանական վարդապետը շատ է կարևորել գրչության արվեստը, նա հատուկ ուշադրություն է դարձրել ձեռագրեր օրինակելուն, ստեղծել դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները և անձամբ հետևել այդ աշխատանքներին: Նա իր սաներին ստույգ և ընտիր օրինակներից արտագրել էր տալիս ձեռագիր մատյաններ: Ավելին, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ Վանականն այլ տեղերից հավաքում էր մեծ քանակությամբ ձեռագիր մատյաններ ու դրանցով հարստացնում Խորանաշատի մատենադարանը: Այստեղ գրիչները ձեռագիր մատյաններ էին ընդօրինակում ոչ միայն իրենց նախաձեռնությամբ, այլև կատարում էին ուրիշների պատվերները: Վանականը չափազանց կարևորում էր նաև խմբագրական աշխատանքները: Նրա հանձնարարությամբ վարդապետարանի սաները կազմում և խմբագրում էին ծիսական ժողովածուներ, հատկապես Հայսմավուրքներ և Տոնապատճառներ: Հայսմավուրք ժողովածուների խմբագրման աշխատանքներում անգերազանցելի էին Իսրայել Խաչենցին և Կիրակոս Գանձակեցին, իսկ Տոնապատճառների խմբագրումն ու վերակազմումն իրականացնում էր Վարդան վարդապետը:

Գրչության արվեստը ծաղկում էր Խորանաշատի վանքում և կապվում նրա ռաբունապետի անվան հետ: Գրիչներն իրենց օրինակած ձեռագրերի հիշատակարաններում հաճախ գրչության վայրը ճանաչում ու նշում էին Վանականի անունով՝ «ի վանս վարդապետի Վանականի»: Ուսուցչի մասին հիացմունքով են խոսել նրա աշակերտները: Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ դպրոցը, ի դեմս մեծիմաստ ու հանճարեղ ուսուցչապետի, ձեռք էր բերել մեծ անուն և համբավ, որտեղ կրթություն ստանալու էին գալիս տարբեր վայրերից: Վանական վարդապետի մասին հիացմունքով են գրում նաև Վարդան վարդապետը և Գրիգոր Ակներցին, իսկ գրիչները հիշատակարաններում ամենից առաջ հիշում են, որ իրենք ուսում են ստացել Վանականի դպրոցում, նրա ձեռքի տակ:

Խորանաշատում մեզ ծանոթ առաջին գրիչը Ստեփանոս Աղթամարցին է: Նա 1223 թ. Խորանաշատի վանքում ընդօրինակում է բոլորգիր մի ժողովածու (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 2101), որն ամփոփում է իմաստասիրական, մեկնողական և բարոյախոսական երկեր: Հիշատակարանում Ստեփանոս Աղթամարցին գրում է, որ կրթություն է ստացել Վանականի մոտ՝ «ի վանքս Խորանաշատու»: Ստեփանոսը նախ հիշում է ռաբունապետ Վանական վարդապետին, որ «փայլում էր ինչպես առավոտյան աստղ», ապա իր արյունակից հարազատներին:

Հովհաննես ավետարանիչ և Պրոխորոն, ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ., Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 247բ



Անվանաթերթ Մատթեոսի, ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ., Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 12ա



Հիշատակարան, ՄՄ ձեռ. 2101, Ժողովածու, 1223 թ., Խորանաշատ, գրիչ՝ Ստեփանոս Աղթամարցի, 85բ-86ա

Այս ձեռագրի ընդօրինակումից մեկ տարի հետո՝ 1224-ին, Խորանաշատի Սուրբ Աստվածածին եկեղեցու հովանու ներքո Խաղբակյան Ցաջուռ իշխանի դուստր Վանենու պատվերով գրվում ու նկարազարդվում է մագաղաթյա երկաթագիր մի Ավետարան, որը Վանական վարդապետն անվանում է «Տավշո Ավետարան»: Այն հետագայում վանքի անունով կոչվում է «Խորանաշատի Ավետարան» (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 4823): Ձեռագրի գրիչն ու ծաղկողը հայտնի չեն: Հիշատակարանում գրիչը, անդրադառնալով Վանական վարդապետին, գրում է, որ նա կառուցել է վանքը և դարձել նրա առաջնորդը: Ձեռագիրն ունի չորս ավետարանիչների պատկերներ՝ իրենց անվանաթերթերով, տասը նկարազարդ խորաններ, կիսախորաններ, զանազան լուսանցազարդեր, որ պարզ ու գեղեցիկ ծաղկազարդել է նկարիչը: Ծաղկողն օգտագործել է ոսկի և ներդաշնակորեն ընտրված նուրբ երանգներ: Ձեռագրի ճակատագրի վարաբերյալ հետագա հաղորդումները նրա գերեվարումների և փրկագնումների մասին են:

Երբ 1236 թ. մոնղոլները գերեվարում են Վանականին և նրա աշակերտներին, թալանում են վանքի ողջ գույքը, այդ թվում՝ արծաթով ընդելուզված երկու Ավետարան: Նրանցից մեկն այս գեղեցիկ մագաղաթյա մատյանն էր: Մոնղոլներն այն նախ տանում են Սուղան, ապա՝ Տփխիս՝ հանելով վաճառքի: Տեղի հայերը 1238 թ. «մեծ ծախսերով ու ջանքերով» այդ Ավետարանը փրկագնում են, ապա հանձնում այն ստանալու նպատակով Տփխիս գնացած Վանական վարդապետին: Այդ մասին իմանում ենք Ավետարանում Վանականի թողած ինքնագիր հիշատակարանից:

Մարկոս ավետարանիչ և անվանաթերթ, ՄՄ ձեռ. 5601, Ավետարան, 1503 թ., Խորանաշատ, ծաղկող՝ Ստեփանոս եպս., 80բ-81ա

Ավետարանը 1517 թ. տարվում է Տաթև, որտեղ Ալեքսանոս աբեղան Ղասում անունով մեկի խնդրանքով փոխում է արծաթյա կազմը. նոր կոստղազարդ կաշվե կազմ է դրվում՝ մետաղյա անկյունազարդերով և Ա փեղկին մետաղյա մի խաչ: Մատյանն այս կազմով էլ հասել է մեզ: Ավետարանը XVI դարում նորից գերվում է, ապա մելիք Հովասափի միջոցներով փրկագնվում ու ընծայվում Վանի Սուրբ Վարդան Ջորավար եկեղեցուն: Ս. Տեր-Ավետիսյանը 1915 թ. Վանում տեսնում է այս Ավետարանը և նահանգապետ Դիտմենի միջնորդությամբ ուղարկում է Սուրբ Էջմիածին:

Խորանաշատից մոնղոլների հափշտակած երկրորդ Ավետարանի ճակատագիրը ցայսօր անհայտ է:

Վանականի մահից հետո Խորանաշատի վարդապետարանի ռաբունապետ դարձած նրա ազգական Գրիգորիս վարդապետը, ցավոք, չի կարողանում պատշաճ բարձրության վրա պահել դպրոցի հեղինակությունը: Դրա հետևանքով նրա փառքն աստիճանաբար խամրում է, իսկ 1283 թ. Խորանաշատի վանահայր հիշատակվող Պետրոս վարդապետի առաջնորդության տարիներին ավարտվում է վանքի գործունեության բեղուն շրջանը: Չնայած դրան՝ հետագայի գրիչները, նկատի ունենալով Խորանաշատի երբեմնի հռչակն ու անունը, հիշատակարաններում այն անվանում են «բարձրահամբաւ», «մեծահարկ գմբեթածն», «հռչակաւոր սուրբ ուխտն Խորանաշատ»:

Վանականի մահվանից հետո Խորանաշատի գրչության կենտրոնի գործունեությունն աստիճանաբար թուլանում է:

Գրիգորիս վարդապետը, որն իրեն անվա-

նում է «ձեռնասուն զավակ Վանականի» և նրա հաջորդը բաբունապետի պաշտոնում, Տարոնի նշանավոր Սուրբ Ամենափրկիչ և Սուրբ Աստվածածին եկեղեցիներում ուսում ստացած Ստեփանոս քահանայի պատվերով ընդօրինակում է մի Ժողովածու, որտեղ ամփոփված են Վանական վարդապետի և եկեղեցու հայրեր Եփրեմ Ասորու, Հովհան Ոսկեբերանի, Արիստոտելի և այլոց մեկնողական երկերը (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 2273): Նա 1255 թ. Թադե և Հայրապետ եղբայրների համար օրինակում է Վանականի «Հարցմունք ու պատասխանիք»-ը (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 6106): Պետրոս վարդապետի առաջնորդության տարիներին Մարտիրոս գրիչը ծերացյալ հասակում՝ 1283 թ., արտագրում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը՝ գրչության տեղի մասին դարձյալ նշելով «ի վանս Վանական Վարդապետի» (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 1563): Այն «Մատյան ողբերգության» երկի հյուսիսային Հայաստանում կատարված հնագույն ընդօրինակությունն է: Սարգիս գրիչը Մխիթար վարդապետի խնդրանքով արտագրում է Վարդան վարդապետի Երգ երգոցի և Դանիելի մեկնությունները (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 5452):

Խորանաշատից XVI դարից ունենք մեկ ձեռագիր (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 5601): Նրա անհայտ գրիչը նշում է, որ այն գրչագրվել է «ի գերահռչակ ուխտս Խորանաշատայ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին»: Մատյանն ավետարանիչների պատկերներով, կիսախորաններով և թռչնագիր զարդագրերով ծաղկել է Ստեփանոս եպիսկոպոսը:

XVII դ. երկրում մշակութային կյանքի վերելքին զուգահեռ Խորանաշատի վանքի հոգևոր ենթակայության տակ գտնվող որոշ բնակավայրերում սկսեցին ձեռագրեր ընդօրինակել: Դրանց գրիչները ձեռագրերի գրչության վայրն արձանագրելուց զատ հարկ էին համարում շեշտել, որ գործել են Խորանաշատի Սուրբ Աստվածածին եկեղեցու հովանու ներքո՝ չմոռանալով հիշատակել Վանական վարդապետին:

Այսպես, 1620 թ. Հակոբ երեցն օրինակում է Ավետարան և իր թողած հիշատակարանում գրում, որ գործել է «ի դուռն սուրբ, բարձրահամբաւ Սուրբ Խորանաշատու և ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս սուրբ Վանական Վարդապետիս և Գրիգոր վարդապետիս, և Ս. Յովանիսիս» (Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. 6669): Այս Մատյանը նկարազարդ է Մարկոս և Հովհաննես ավետարանիչների պատկերներով, չորս անվանաթերթերով, զանազան լուսանցազարդերով ու զարդագրերով, Մատթեոս և Ղուկաս ավետարանիչների պատկերները բացակայում են: Քանի որ ձեռագիր արտագրելու արվեստը նաև վայելչագրություն է, գրիչը ներողամտություն է հայցում սխալների ու խոշոր գրի համար և փորձում արդարանալ՝ նշելով, որ ծեր է, աչքի լույսը՝ նվազ:

XVII դ. Տավուշում հայտնի և բեղուն գրիչ էր Իսրայել քահանայի որդի Եսային: Ըստ մեզ հասած ձեռագրերի հիշատակարանների ժամանակագրության՝ նա 27 տարի՝ 1631-1657 թթ. ձեռագրեր է ընդօրինակել: Դրանցից մեկը Սաղմոսարան-Ժամագիրք է, որի հիշատակարանում նա գրչության տեղը հետևյալ կերպ է նշում. «ի յերկիրս Տայուշ, ի գեղս, որ կոչի Թաւուշ, ընդ հովանեաւ Ս. Նահատակիս ի յաթոռս Խորանաշատի Ս. Աստուածածնիս եւ ի

Ղուկաս ավետարանիչ, և անվանաթերթ, ՄՄ ձեռ. 5601, Ավետարան, 1503 թ., Խորանաշատ, ծաղկող՝ Ստեփանոս եպս., 137բ-138ա

Վանական վարդապետի սուրբ գերեզմանի եւ սրանց սպասաւորի տէր Յովհաննէս արհեպիսկոպոսի»: Հովհաննեսը Խորանաշատի արքեպիսկոպոսն էր, որի եռանդուն գործունեության շնորհիվ Տավուշ գավառի մշակութային կյանքը, այդ թվում և գրչության արվեստը, XVII դ. զգալի վերելք ապրեց:

1631 թ. հիշատակարանում Խաչատուր քահանան հայտնում է, որ ինքն է այդ Սաղմոսարան-Ժամագիրքը գրել տվել Եսայի գրչին՝ ի հիշատակ իր ծնողների՝ Հովհաննես քահանայի և Խաթունի: Սակայն համաձայն այդ ձեռագրի երրորդ հիշատակարանի՝ Պողոս երեցը, որ կորցրել էր ընտանիքի բոլոր անդամներին՝

Հովհաննես ավետարանիչ, իր աշակերտ Պրոխորոն և անվանաթերթ, ՄՄ ձեռ. 5601, 1503 թ., Խորանաշատ, ծաղկող՝ Ստեփանոս եպս., 235բ-236ա

ծնողներին, կողակցին ու զավակներին, մնացել էր մենակ, հետց նույն տարում Խաչատուրից թանկ գնով ձեռք է բերել այս մատյանը՝ որպես հիշատակ իր մերձավորների, և խնդրում աղոթքներում հիշել նրանց (Վենետիկ, ձեռ. 59):

Եսայի գրչից մեզ հասած հաջորդ մատյանը Սաշտոց է, որը նա օրինակել է 1637 թ.՝ գրչության վայրը դարձյալ նշելով նախորդի նման (Սաշտոցյան Մատենադարան, ձեռ. 8941): Նա 1639 թ.՝ «ի դառն եւ անբարիշտ ժամանակիս» Թումա կրոնավորի համար օրինակել է մի Ավետարան, որի հիշատակարանում գրչության տեղի մասին գրում է. «ընդ հովանեաւ Ս. Խորանաշատայ Աստուածածնիս ի գաւառս Զագամ»: 1640-ին Եսայի գրիչը դարձյալ օրինակում է մի Սաշտոց (Սաշտոցյան Մատենադարան, ձեռ. 3998):

1642 թ. Եսայի գրչին որդու՝ Դավիթ սարկավագի համար ժամագիրք է պատվիրում ոմն Թամուր (Սաշտոցյան Մատենադարան, ձեռ. 8882): Նա 1645 թ. ոմն Սարուխանի պատվերով ընդօրինակում է մի Ավետարան, որի հիշատակարանում նկարագրում է պարսից տիրապետության պայմաններում ժողովրդի ծանր վիճակը: Եսային մասնավորապես հայտնում է, որ պարսից իշխանությունները հայերին ստիպում են կրոնափոխ լինել: Վերջին անգամ Եսայի գրչին տեսնում ենք 1657 թ., երբ նա Աստվածատուր քահանայի համար «ի յերկիրս Տայուշ, ի գեղս, որ կոչի Թաւուզ ընդ հովանեաւ Խորանաշատ Ս. Աստուածածնիս և Վանական Վարդապետի սուրբ գերեզմանիս» ավարտում է մի Ժողովածու: Այն ամփոփում է Գրիգոր Տաթևացու և Հակոբ Ղրիմեցու քարոզները և Մխիթար Գոշի, Հովհաննես Երզնկացու և Դավիթ Ալավկաորդու կանոններից (Սաշտոցյան Մատենադարան, ձեռ. 2116):

Խորանաշատում գործած մեզ հայտնի վերջին գրիչը Ավետիս քահանան է, որը 1674 թ. մի Սաշտոց է օրինակել (Սաշտոցյան Մատենադարան, ձեռ. 3536): Ձեռագիրը խոնավությունից վնասված է, որոշ տեղեր անընթեռնելի են: Վնասված է նաև հիշատակարանը, սակայն բարեբախտաբար պահպանվել են գրչության վայրի անունը և ժամանակը: Մատյանը գրվել է Պետրոս կաթողիկոսի աթոռակալության տարիներին «յաթոռս Խորանաշատու»:

Այսպիսով, Խորանաշատը եղել է նաև գրչության նշանավոր կենտրոն: Մեզ են հասել XIII-XVII դդ. ինչպես Խորանաշատում, այնպես էլ նրա հոգևոր ենթակայության տակ գտնվող եկեղեցիներում ու բնակավայրերում, հատկապես Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Տավուշ գյուղում ընդօրինակված մի շարք ձեռագրեր:

Թամարա Մինասյան



Լուսանցազարդ և գրչության նմուշ, ՄՄ ձեռ. 1563, Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, 1283 թ., Խորանաշատ, գրիչ՝ Մարտիրոս, 6բ

Ղուկաս ավետարանիչ և անվանաթերթ,
ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ.,
Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 155բ-156ա

Անխանթելիր Մատթեոսի, ՄՄ ձեռ. 5601, Ավետարան, 1503 թ., Խորանաշատ, ծաղկող՝ Ստեփանոս եպս., 1ա

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Վանական վարդապետը թողել է մատենագրական հարուստ ժառանգություն: Այն, ըստ բովանդակության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ պատմագրական, մեկնողական և այլ երկեր:

Պատմագրական երկ: Ստույգ է, որ Վանական վարդապետը գրել է պատմագրական բնույթի երկ, որն ավանդույթի համաձայն կոչում ենք «Պատմություն»: Այս մասին հստակ տեղեկություններ են հաղորդում նրա աշակերտներ Կիրակոս Գանձակեցի և Վարդան վարդապետ պատմիչները: Վերջինս վկայում է, որ 1236-1265 թթ. պատմությունը մանրամասնորեն գրի են առել Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին: Գանձակեցին իր «Պատմության» մեջ հիշատակելով Վանականին, նրան ներկայացնում է որպես «մեծիմաստ և հանճարեղ, մեծիմաստ և առատամիտ» վարդապետ և վկայում, որ նա իբրև ականատես է գրել իր ժամանակների պատմությունը:

Վարդան վարդապետի հաղորդած տեղեկությունների հիմամբ ենթադրվել է, որ Վանական վարդապետը գրել է 1236-1265 թթ. իրադարձությունների, այսինքն՝ միայն մոնղոլների, կամ, ինչպես այն ժամանակ էին ասում, «նետողաց ազգի» և Հայաստանում ու հարևան երկրներում նրանց կատարած արշավանքների պատմությունը: Նաև կարծել են, որ Վանական վարդապետը «Պատմություն»-ից բացի, առանձին երկով գրել է XIII դ. սկզբում Զաքարե Բ իշխանի նախաձեռնությամբ Լոռեում և Անիում գումարված եկեղեցական ժողովների մասին, որոնք ժամանակին մեծ հուզումների առիթ են եղել: Վանական վարդապետի կողմից պատմագրական բնույթի երկու աշխատություն գրելու այս ենթադրությունը պատճառաբանված չէ: Նախ՝ Վարդան վարդապետի այն տեղեկությունը, թե 1236-1265 թթ. պատմությունը մանրամասնորեն գրել են Վանական վարդապետը և Կիրակոս Գանձակեցին, թույլ չի տալիս կարծել, որ Վանականի «Պատմությունը» սկսվում է 1236-ով: Բացի այդ, Վանական վարդապետի երկը չէր կարող ավարտվել 1265 թվականով, քանի որ նա մահացել է 1251 թ.: Վարդան վարդապետը հայտնում է, որ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն»-ը գրել է իրենց ուսուցչին՝ Վանական վարդապետին «համանման»:

Եթե նկատի ունենանք, որ Կիրակոսի «Պատմությունը» սկսվում է Հայոց մեծ դարձից, ապա պատճառաբանված կլինի ենթադրել, որ Վանական վարդապետի «Պատմություն»-ը ևս ժամանակագրորեն սկսվել է ավելի վաղ, գուցե հենց Հայաստանում քրիստոնեության պետականորեն ընդունումից՝ առավել մանրամասն ներառելով XIII դ. առաջին կեսի իրադարձությունները:

Ինչ վերաբերում է այն ենթադրությանը, որ Վանական վարդապետն առանձին երկով հեղինակել է Լոռեի և Անիի եկեղեցական ժողով-

ների պատմությունը, ապա այն հիմնավոր չէ: Բանն այն է, որ Կիրակոս Գանձակեցու հստակ վկայության համաձայն՝ եկեղեցական այդ ատյանների մասին ինքը գրել է՝ նյութը քաղելով Վանական վարդապետի «Պատմություն»-ից:

Այսպիսով՝ մատենագրական կցկտուր տեղեկությունների քննությամբ պարզվում է, որ Վանական վարդապետը գրել է պատմագրական բնույթի մեկ երկ, այն էլ՝ շատ արժեքավոր, որը, դժբախտաբար, մեզ չի հասել:

Մեկնողական երկեր: Վանական վարդապետը թողել է մեկնողական բնույթի մատենագրական հարուստ ժառանգություն: Այստեղ, անշուշտ, մեծ դեր է կատարել նրա ուսուցչական տաղանդն ու գիտնական-վարդապետ լինելու հանգամանքը: Հավանաբար մեկնությունները գրել է իր հիմնած վարդապետարանում դասավանդելու համար:

ա. «Մեկնութիւն Յոբայ». Վանականի գրչին պատկանող մեկնողական գրվածքների մեջ այս երկն ամենածավալունն է, որը, ինչպես վկայում է ձեռագրերի մեջ հանդիպող խորագիրը, ստեղծվել է ծաղկաքաղի սկզբունքով: Ըստ դրա՝ քաղվածքներն արված են Դավիթ և Իսիքոս վարդապետներից: Բացի այս անուններից, լուսանցքներում հիշատակվում են նաև Ստեփանոս Սյունեցու, Եփրեմի, Դավիթ Քոբայրեցու և այլոց անուններ: Վանական վարդապետի այս աշխատանքը մեծ կարևորություն ունի իբրև Հոբի մեկնությունների շղթայի մի մասը, մանավանդ, որ պարունակում է պատառիկներ Եփրեմ Ասորու և Ստեփանոս Սյունեցու մեկնություններից, որոնց ամբողջական տարբերակները կորսված են, իսկ այս պատառիկները որևէ այլ տեղ չեն հանդիպում: Կարևոր աշխատանք է նաև Իսիքոսի մեկնության համառոտումը: Հայր Քերովբե Չրաքյանի կարծիքով հայ մեկնիչներից առաջինն ու միակը Վանականն է, որ ծանոթ է եղել այս մեկնությանը և այն համառոտելով մի տեսակ ժողովրդականացրել է: Եվ իրապես, XIII դ. վերջին Հոբի դժվարիմաց գրքի և խրթին բառերի լուսաբանման համար մեր նախնիները պարտական պիտի լինեն Վանականին և նրա միջոցով Իսիքոսին: Չրաքյանը նշում է, որ Վանականը, առանց անունը հիշատակելու, օգտվել է նաև Նարեկացուն վերագրվող մեկնությունից: Պատահական չէ, որ Գրիգոր Տաթևացին, որը Վանականի ազդեցության տակ է գրել իր «Յոբայ լուծմունքը», նշում է, որ մեկնությունների հավաքողը Վանական վարդապետն է:

բ. «Բացատրութիւն աղօթից Ամբակումայ մարգարէի». Այս երկասիրությունը շարադրված է մեծ խնամքով և հմտությամբ: Թեև դրանում առկա են բառացի մեկնության տեղիներ, բայց առավելաբար հանդիպում են ուշագրավ այլաբանություններ:

գ. «Համեմատութիւն Հին Կտակարանաց ի նորս». Սա Հին և Նոր Կտակարանների մի խորհրդավոր համեմատություն է, որտեղ Հին Կտակարանում օգտագործված նշանավոր բառերին հանդիպադիր ներկայացված են նրանց նորկտակարանյան համարժեքները (Օրինակ՝ երկինք՝ եկեղեցի, արեգակ՝ Քրիստոս և Ավետարան, լուսին՝ օրենք, Արուսյակ՝ Հովհաննես Մկրտիչ, աստղեր՝ քրիստոնյաներ և այլն):

դ. «Տեսութիւն շարականին Ուրախացիր պսակ Կուսից Վանական վարդապետի ասացեալ ի խնդրոյ Պետրոսի». Ինչպես երևում է վերնագրից, Վանականն այս մեկնությունը գրել է ոմն Պետրոսի խնդրանքով:

Վանական վարդապետի գրչին են պատկանում նաև «Վանական վարդապետի ասեցեալ ի սաղմոսն Այս ծով մեծ» և «Ի բանն հայեաց ի

Կաշեպատ կազմ, դրոշմազարդ, ՄՄ ձեռ. 1563, Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, 1283 թ., Խորանաշատ



Խորան, ՄՄ ձեռ. 4823, Ավետարան, 1224 թ., Խորանաշատ, ծաղկող՝ անհայտ, 10ա

քեզ գուցե լինիցի բան ծածուկ ի սրտի քում» խորագրով մեկնողական երկերը:

Այլ երկեր:

ա. «Խրատ դաւանութեան Վանական վարդապետի». Մեծանուն վարդապետն այս երկը գրել է ի պատասխան Սուրբ Հոգու բխման վարդապետության վերաբերյալ Հռոմի Ինոկենտիոս Դ պապի (1243-1254) հարցումի: Հռոմի կաթոլիկ եկեղեցին ընդունում էր, որ Սուրբ Հոգին բխում է Հորից և Որդուց: Հայոց եկեղեցու վարդապետական սահմանումն իմանալու նպատակով Հռոմի պապը դիմում է ժամանակի հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցուն (1221-1267): Հռոմի պապին պատասխան գրելու համար Կոստանդին Բարձրբերդցին, հաշվի առնելով Վանական վարդապետի հեղինակությունն ու աստվածաբանության խորը գիտելիքները, հենց նրան է խնդրում ներկայացնել Հայոց եկեղեցու վարդապետությունը Սուրբ Հոգու բխման վերաբերյալ: Վանականը տալիս է միջսահման պատասխան՝ զերծ մնալով Հռոմի կաթոլիկ եկեղեցու դավանական սահմանումը լիովին ընդունելուց: Նա գրում է, որ ըստ Հայոց եկեղեցու վարդապետության՝ «Սուրբ Հոգին բխում է Հորից և երևում Որդու միջոցով»:

բ. «Թուղթ առ Դաւիթ մոլորեցուցիչ».Վանական վարդապետի այս մեղադրական թուղթը մեզ չի հասել: Այս երկի վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում Կիրակոս Գանձակեցին:

գ. «Յաղագս տարեմտին ի Վանական վարդապետէ ասացեալ». Վանական վարդապետի այս աշխատությունը նրա լավագույն գործերից է: Այս երկը բացահայտում է վարդապետի գրչի ուժն ու գիտական կարողությունները: Նրանում շոշափված են տարեմուտի, տարվա, ամիսների, արեգակի, լուսնի, մոլորակների և մի շարք ժողովուրդների տոմարների վերաբերյալ բազմաթիվ հետաքրքիր հարցեր, որոնց տրված են գիտական բացատրություններ: Դրանք, շարադրելով լինելով բազմաթիվ փաստերի հետ, աշխատությունը դարձնում են տիեզերագիտության և աստղագիտության պատմությամբ հետաքրքրվող մասնագետների համար կարևոր սկզբնաղբյուր: Երկում տոմարական դիտարկումները հաճախ ուղեկցվում են հոգևոր ու աստվածաբանական խորհրդածություններով: Աշխատությունը հասցեագրված է եղել հասարակությանը և կարդացվել է եկեղեցիներում տարեմուտի օրը՝ օգոստոսի 11-ին: Երկի մեջ պահպանվել է նաև Արտավազդի առասպելը:

դ. «Պատճառք վասն առաջաւորաց պահոց արարեալ Վանական վարդապետի վասն հակառակաց եւ այպանողացն զսուրբ պահսն». Այս աշխատությունն ուշագրավ է այնտեղ պահպանված միջնադարյան զրույց-ավանդություններով:

ե. «Հարցմունք Վանական վարդապետին երկու աղալն ի մի երկան». Այս փոքրիկ երկը մաս է կազմում Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» ծավալուն աշխատանքի, սակայն ձեռագրերում հաճախ հանդես է գալիս իբրև առանձին միավոր: Նույն այս երկը Վարդան վարդապետ Բաղիշեցու՝ Ամրդոլու վանքի գրքերի ցուցակի ցանկում կրում է «Վանական վարդապետի մադու բնության մասին» խորագիրը:

զ. «Հարցմունք եւ պատասխանիք զոր արարեալ է Վանական վարդապետի ի Սուրբ Գրոց». Բավականին ծավալուն և ընդգրկուն երկ է: Ամփոփում է այն բոլոր գիտելիքները, որոնք ուսման սկզբնական շրջանում պարտավոր էին ձեռք բերել Խորանաշատի վարդապետարանի սաները: Այն փաստորեն դպրոցի ուսումնական ծրագրի համառոտ ամփոփումն է՝ հանրագիտարանային բնույթի երկ: Հեղինակն իր գործն ամբողջացրել է Խորանաշատի վանքում:

Անհարազատ կամ տարակուսական մանր երկեր:

Այս շարքի ներքո Համազասպ Ոսկյանը թվարկել է ութ գործի վերնագիր, որոնցից երկուսը տպագրվել են «Գիրք Թղթոցի» թիֆլիսյան հրատարակության մեջ՝ ա) «Վանական վարդապետին ասացեալ Բան հաւատալի ազգիս մերում» և բ) «Այլ բան է ասացեալ Վանական Վարդապետին»:

Վանական վարդապետի մատենագրությունը, ցավոք, դեռևս լրջորեն ուսումնասիրված չէ և պատշաճ գնահատականի չի արժանացել: Նրա գրչին պատկանող գրվածքները ցիրուցան սփռված են ձեռագրերի մեջ: Նրանց մեծ մասն անհարազատ կամ տարակուսելի է համարվում, քանի որ միայն մեր վարդապետը չէ Վանական անունն ունեցել: Նրան շատ գեղեցիկ է բնորոշում ականավոր հայագետ Համազասպ Ոսկյանը. «Միշտ հաստատուն կմնա, որ նա ավելի ձգտել է աշակերտություն ունենալ և ոչ թե մեկ գրչով, այլ նրանցով՝ շատ գրիչներով գրել, քանզի ամեն անգամ, երբ նրանք իրենց գրիչը շարժում էին, նրանից ստացած խրատներն ու նրա ազդեցությամբ բառը ծորում էր իրենց գրիչներից: Այսպես, իր աշակերտներով նա երկար ապրեց և ցայսօր նրանցով և իր երկերով փոքր դիրք չի գրավում հայ դպրության պատմության մեջ»:

Տեր Արամ քահանա Միրզոյան



Գրչության նմուշ և գաղտագիր, ՄՄ ձեռ. 4823, Ակնտարան, 1224 թ., Խորանաշատ, գրիչ և ծաղկող՝ անհայտ, 313ա

ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

Խորանաշատի ճարտարապետական համալիրը միջնադարյան Հայաստանի նշանավոր հուշարձանախմբերից է: Իր հատակագծային և ծավալատարածական հորինվածքով, կոնստրուկտիվ լուծումներով ու հարդարանքային միջոցներով այն պատմական Հայաստանի Ուտիք նահանգի շինարարական արվեստի համար հանգուցային նշանակություն է ունեցել:

Գտնվում է << Տավուշի մարզի Չինարի գյուղից մոտ 2.5 կմ արևելք, անտառապատ սարալանջի ոչ մեծ տափարակում: Համալիրի կառուցման մասին առաջին հիշատակությունը պատկանում է պատմիչ Կիրակոս Գանձակեցուն, որն այն տեղորոշել է «Երգևանից բերդի դիմաց, Գարդմանի թիկունքին»:

Խորանաշատի վանական համալիրը բաղկացած է Սուրբ Աստվածածին, Սուրբ Կիրակի, Սուրբ Ճգնավոր եկեղեցիներից, առաջինին կցված գավթից և շրջակայքում գտնվող աշխարհիկ բնույթի այլ շինություններից, որոնց միայն ավերակներն են պահպանվել: Անվանումը ստացել է խորանների շատության պատճառով:

Սուրբ Աստվածածին եկեղեցին համալիրի գլխավոր ու ժամանակագրորեն առաջին շինությունն է: Իշխող դիրք ունի հուշարձանախմբում և շրջակա միջավայրում: Պատկանում է ժամանակին տարածված գմբեթավոր դահլիճի տիպին: Արտաքինից ուղղանկյուն (12,7×11մ)

Հատված Խորանաշատի հարավային նկատից

Խորանաշատի գավիթը

ներքուստ խաչաձև հատակագծով, բեմի երկու կողմերում տեղադրված կրկնահարկ ավանդատներով կառույց է: Եկեղեցու հիմնադրման մասին աղբյուրներում վկայություններ չեն պահպանվել: Միայն հայտնի է, որ նրա արևմտյան մուտքի կառուցումն ավարտվել է 1211 թ.: Ամենայն հավանականությամբ Սուրբ Աստվածածնի կառուցումը սկսվել է 1209 թ., իսկ 1222 թ. ավարտված է եղել, քանի որ այդ թվականին նրան կից գավթի շինարարությունը սկսվել էր: Բոլոր դեպքերում 1223-ին այն արդեն գործում էր:

Եկեղեցու ներքին տարածքը լուսավորված է տասներկու պատուհանով, որոնցից ավագ

խորանի մեջ բացվողը զույգ է: Որմնամույթերով պարփակված արևմտյան մասերի պատուհանները շրջանաձև են: Լուսամուտներից վեցը գտնվում են թմբուկի վրա: Դրանք ուշագրավ են իրենց դասավորությամբ: Լուսամուտները հորիզոնական հարթության մեջ ոչ մեծ պտույտի շնորհիվ արևի նկատմամբ ավելի նպաստավոր դիրք են ստացել: Դա ապահովել է լույսի առավել ներթափանցումը եկեղեցի:

Սուրբ Աստվածածին եկեղեցին արտաքինից առանձնանում է ճարտարապետական հստակ լուծումներով և հարդարանքային ինքնատիպ միջոցներով: Այն բոլոր կողմերից զոտևորված է: Դա կառույցին ոչ միայն կերպարային ինքնուրույնություն է հաղորդում, այլև գոտին որպես քիվ գործառական նշանակություն ունի: Եկեղեցու արևելյան ճակատի զույգ լուսամուտից վերև խաչի ստորին թևի կիսաշրջանաձև հիմքի մեջ ներկայացված է ճանկերով որս բռնած թևատարած արծվի պատկերաքանդակ: Այն աչքի է ընկնում պատկերման հստակությամբ ու զուրկ է քանդակային մանրամասնություններից: Ի տարբերություն նույն թեմատիկայով այլ պատկերաքանդակների, որտեղ արծիվների որսը սովորաբար որևէ հեզ կենդանի է (ոչխար, եղնիկ, նապաստակ), Խորանաշատում արծվի ճանկերում գիշատիչ կենդանի է պատկերված՝ գայլ կամ հովազ:

Եկեղեցու ճակատների վերոհիշյալ գոտիով կազմավորված խաչերից արևելյանն ուղղաթև է, իսկ հյուսիսայինը և արևմտյանը՝ գեղարդաձև: Դրանք ընկալվում են որպես յուրատեսակ ծաղկապատկերներ: Եկեղեցու մուտքերն ունեն միանման հորինվածք՝ բնորոշ XII-XIV դդ. հայկական աշխարհիկ և կրոնական կառույցների մուտքերին: Արտաքուստ դրանք

Խորանաշատի գավիթի ծածկը

Ս. Աստվածածին եկեղեցու մուտքը

Խորանաշատի գավթի մուտքը պատկերաքանդակներով



Ս. Աստվածածին եկեղեցու հյուսիսային մուտքը պատկերաքանդակներով

Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան ճակատը

Ս. Աստվածածին եկեղեցու արևելյան պատը ներսից

եզերված են ուղղանկյուն քանդակազարդ շրջանակներով, իսկ բուն բացվածքները՝ նուրբ կիսասյուներով: Բարավորները հարդարված են հյուսիսայինում քառաթև և շեղածև, իսկ արևմտյանում վեցաթև աստղերի տեսքով՝ պահպանելով գունային ընտրությունը (կանաչ և կարմիր): Եկեղեցու թմբուկը շրջառում են բարդ տրամատի եզրավորումներով տասներկու որմնակամարներ: Դրանցում մեկուսեջ բացված են նեղ ու ծիգ պատուհանները: Այն նման հարդարանքով մյուս հուշարձաններից տարբերվում է որմնակամարների խորաքանդակ ձևի ընտրությամբ: Դրա շնորհիվ գմբեթի զանգվածը զգալիորեն փոքրացել է: Դա, անկասկած, դրական է անդրադառնում կառույցի կոնստրուկտիվ աշխատանքի վրա: Թմբուկը համաչափական կառուցվածքով և ճարտարապետական հարդարանքով համահնչուն է շինության մյուս ծավալների հետ:

Գավիթը կից է գլխավոր՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակատին: Պատկանում է կենտրոնական հորինվածքով չորս սյունանի գավիթների տիպին: Այն ուղղանկյան հատակագծով (16.8×16 մ), արևելյան կողմում տեղադրված երկու կրկնահարկ ավանդատներով կառույց է: Գավթի հիմնադրման ստույգ թվականը հայտնի չէ: Սակայն, անկասկած, նրա կառուցումը սկսվել է Սուրբ Աստվածածին եկեղեցու շինարարության ավարտից անմիջապես հետո: Այդ են վկայում գավթի առաջին հարկի ավանդատների բարավորների 1222 թվակիր վիմագրերը: Գավիթը ևս Վանական վարդապետն է կառուցել:

Գավթի հիմնադրումից հետո նրա շինարարությունը շարունակվել է մինչև 1229 թ. գարուն-ամառը, երբ խորեզմշահ Ջալալ ադ-Դինն ավերել է Խորանաշատը: Այն վերսկսվել է 1236 թ. աշնանը մոնղոլական գերությունից Վանական վարդապետի փրկագնվելով ազատվելուց հետո: Ավարտվել է նախքան 1251 թ. վերջինիս վախճանվելը:

Գավթի կենտրոնական մասում գտնվում են չորս միակտոր սյուներ: Դրանք միմյանց և հանդիպակաց որմնասյուների հետ կապված են կամարներով: Վերջիններիս վրա հենված են ծածկի թաղերը և երդիկային բացվածքով կենտրոնական ծածկը: Այս կառույցի ներքին ճարտարապետական հորինվածքի և կերպարի ստեղծման մեջ էական դեր ուներ արևմտյան պատի հարդարանքը: Այն Սուրբ Աստվածածին եկեղեցու ավագ խորանի նման պատված է տասներկու գեղակերտ խորշերով՝ վեցը մուտքից աջ, վեցը՝ ձախ: Մուտքի բարավորին արված է հավերժության նշան: Դրանից վերև՝ պատին ագուցված պատվանդանին, երկու առյուծի և մարդու պատկերաքանդակ է: Մարդը պատկերված է առյուծների արանքում և բռնել է նրանց պարանոցներին կապված պարաններից: Այս պատկերաքանդակը «Հին կտակարան»-ի «Դանիելն առյուծների գբում» սյուժեի արտացոլումն է: Իրենց հորինվածքով եզակի են նաև գավթի հյուսիսային և հարավային կենտրոնական թաղերից կախված թևատարած ճախրող արծվի ու օձի գլխի ծավալաքանդակները:

Հատկապես հետաքրքրական է գավթի կենտրոնական մասի ծածկը: Այն ունի հյուսածո համակարգ, որը կառույցի ներքին տարածքին հաղորդում է գեղարվեստական բարձր արտահայտչականություն: Բացի այդ, այն ապահովում է կառույցի կոնստրուկտիվ, այդ թվում և հակաերկրաշարժային կայունությունը:

Խորանաշատի գավթի չորս սյուներից մեկը

Ս Գիրակի եկեղեցու գմբեթը ներսից

Արտաքուստ նույնպես գավիթը մշակված է ուրույն հարդարանքային ձևերով: Ուշագրավ է հատկապես արևմտյան ճակատի շքամուտքը: Այն իր հորինվածքով և քանդակային հարդարանքով եզակի է հայկական համանման ճարտարապետական ձևերի մեջ: Սուտքի բուն բացվածքի եզրերում տեղադրված են բարկիրան զույգ որմնասյուներ: Դրանք խոյակների փոխարեն պսակված են առյուծի ու եզան ծավալաքանդակներով և պահպանիչ խորհրդանշաններ են: Արևմտյան ճակատի հարդարանքը լրացված է շքամուտքից վերև համաչափ տեղադրված միանման բարձրաքանդակ կորածև խաչապատկերներով: Գավթի հյուսիսային և հարավային ճակատներն ունեն անհամեմատ զուսպ լուծումներ: Դրանց աշխուժություն են հաղորդում մեկական պարզածև լուսամուտները և ճակտոնների վերնամասերի քանդակածևերը, որոնցից հարավայինը վարդյակածև արևի ժամացույց է, իսկ հյուսիսայինը՝ կիսագնդի վրա իրականացված հավերժության նշան: Այդ կառույցի ծավալատարածական հորինվածքն ավարտվում է կենտրոնական մասում տեղադրված ութանիստ թմբուկով և այն պսակող երդիկային բացվածքով, վեղարածև ծածկով:

Սուրբ Կիրակի եկեղեցին գտնվում է Սուրբ Աստվածածնից 4 մ հարավ: Այն ուղղանկյուն հատակագծով (արտաքինից 4.3×3 մ) գմբեթավոր շինություն է: Ակներևաբար կառուցվել է նախքան գավիթը: Դատելով ճարտարապետական ձևերից՝ կարելի է կարծել, որ կառուցվել է XIII դ. սկզբներին:

Ներքուստ եկեղեցու չորս անկյուններով բարձրանում են զույգ որմնասյուներ: Դրանցից ծգվող կամարներին հենված է գլանաձև թմբուկը: Շինության արտաքին հարդարանքը խիստ ուշագրավ է: Կառուցված է սրբատաշ քարերով: Ճակտոններ ու միաթեք լանջեր ունեցող պատերից արևմտյանում գտնվում է ուղղանկյուն շրջանակով և քանդակազարդ երեսակալով շքամուտքը: Մնացած ճակատների կենտրոնական մասերով բարձրանում են զույգ կիսասյուներ: Դրանք արևելյան և հարավային ճակատներում միացած են լուսամուտների ուղղանկյուն շրջանակներին: Հյուսիսային ճակատում, որտեղ լուսամուտ չկա, կիսասյուներն ավարտվում են ուղղաթև խաչով, որին նախորդում է կորաթև խաչապատկեր: Ճակատների եզրերով բարձրանում են միայնակ կիսասյուներ:

Սուրբ Ճգնավոր եկեղեցին գտնվում է պարսպից մոտ 150 մ արևելք: Ներկայումս կիսավեր վիճակում է: Հատակագծային (արտաքինից 4.7×3.4 մ) և ծավալատարածական հորինվածքով նման է Սուրբ Կիրակի եկեղեցուն: Այս եկեղեցին ևս պետք է կառուցված լինի XIII դ. սկզբներին: Նրա հարդարանքը կենտրոնացած է եղել լուսամուտների և արևմտյան կողմում գտնվող մուտքի շուրջ: Գմբեթային փոխանցման չորս առագաստների վրա պատկերված են մարդկային դեմքեր, որոնք օժտված են տարբեր կերպարային արտահայտություններով: Դրանք անկասկած չորս ավետարանիչների պատկերներն են: Բեմի ճակատային հարթությունը մշակված է եղել հյուսածո զարդաձևերով: Արտաքինից լուսամուտների վերևներում տեղադրվել են զույգ գլանիկներից կազմված խաչեր, որոնց թևերն ավարտվել են շեղ քառակուսիներով:

Այսպիսով, Խորանաշատի ճարտարապետական համալիրն իր ծավալատարածական հորինվածքով և հուշարձանների ինքնատիպ տեղադրությամբ առանձնահատուկ տեղ է գրավում հայկական նման համակառույցների շարքում: Նրա մեծարժեք հատկանիշներից է ինչպես ազգային շինարարական ավանդույթների նոր մեկնաբանությունը, այնպես էլ քանդակագործության ու կառուցողական արվեստի յուրովի համադրությունը:

Հրաչյա Քարտաշյան

Գմբեթատակ առաստաղի քանդակազարդ բեկոր (Հոգիանվեր ավետարանիչ ())

Ս. Աստվածածին եկեղեցու ծածկը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (*Արտաշես Շահնազարյան*) 4
ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ (*Արտաշես Շահնազարյան*) 13
ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ (*Թամարա Մինասյան*) 20
ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ (*Տ. Արամ քհն Միրզոյան*) 33
ԽՈՐԱՆԱՇԱՏԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ (*Հրաչյա Քարտաշյան*) 38

Արևային ժամացույց

Խմբագիր՝ Վահե Թորոսյան
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան

Ձևավորող՝ Անահիտ Խանզադյան
Լուսանկարներ՝ Տ. Արամ քհն Միրզոյան, Տ. Սամվել վրդ Միսիթարյան,
Հրայր Բազէ
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
Հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

ISBN 978-9939-897-05-9

ISBN 978-9939-897-05-9

9 789939 897059